

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը մասնակցեց «ԿԱՆՉ» ցուցահանդեսի բացմանը

01.11.2018

Այսօր ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը մասնակցեց Աշտարակ քաղաքում կազմակերպված «ԿԱՆՉ» ցուցահանդեսի բացմանը:

Ցուցադրված էին Հայաստանի նկարիչների միության Արագածոտնի մարզի նկարիչների ավելի քան 50 ստեղծագործություններ:

Ցուցահանդեսի նպատակն էր մեկ հարթակում ներկայացնելով մարզի նկարիչների արվեստի լավագույն աշխատանքները՝ համախմբել գեղանկարիչներին, նրանց դարձնել ճանաչելի և մարզում հանրայնացնել կերպարվեստը: